

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2015թ. օգոստոսի 28-ի
նիստի /արձանագրություն N 11/

1. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններիին սեպտեմբերի 1-ից առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսանողների և դասախոսների հաճախելիությանը և կարգապահությանը,

1.1 ուսումնական կարգապահությունը բարձրացնելու նպատակով արգելել առաջին կուրսերի ղեկավարներին մասնագիտական դասերը վարել ինստիտուտից դուրս:

2. Հանձնարարել պրոռեկտոր Ն. Սարգսյանին մինչև ս.թ. սեպտեմբերի 18-ը ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացնել 27.08.2015թ. N 01106/9723-15 գրությամբ պահանջվող ուսանողների ցանկը:

3. Հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին ուսումնասիրել մյուս բուհերի փորձը և քառօրյա ժամկետում ներկայացնել առաջարկ-նախագիծ առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի կառուցվածքային ենթակայության վերաբերյալ:

4. Հիմք ընդունելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության 2014թ.

դեկտեմբերի 1-ի ՀՕ-205-Ն օրենքը, ուժը կորցրած ճանաչել ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2012թ. դեկտեմբերի 26-ի նիստի N7 որոշումը և ս.թ. սեպտեմբերի 1-ից ԵԹԿՊԻ-ում հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների և նվազակցողների համար՝ ըստ տարակարգերի և կոչումների, սահմանել մեկ ժամի արժեքի ներքոհիշյալ չափաքանակները /տե՛ս, աղյուսակը /

Տարակարգ կոչում	Մեկ ժամի արժեքը
1. Պրոֆեսոր	1650 դրամ
2. Դոցենտ	1430 դրամ
3. Ավագ դասախոս	1200 դրամ
4. Դասախոս	1200 դրամ
5. Նվազակցող	1200 դրամ

4.1 Ելնելով տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության առկա ժամաքանակից պրոֆեսորադասախոսական անձնակազմի և նվագակցողների շաբաթական աշխատաժամանակի տևողությունը սահմանել ըստ ներքոհիշյալ աղյուսակի.

ուսումնական ծանրաբեռնվածություն	շաբաթական աշխատաժամանակը
մինչև 80 ժամ երկու կիսամյակի ընթացքում	կնքել վճարովի ծառ. պայմանագիր
80-150	4 ժամ
151-220	6 ժամ
221-290	8 ժամ
291-360	10 ժամ
361-430	12 ժամ
431-500	14 ժամ
501-570	16 ժամ
571-640	22 ժամ
641-699	30 ժամ
700-1080	36 ժամ

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան